ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա և դուք ամենեքին աղօթս արարեք»:

Սույն թվականի հունիսի 10-ին և 11-ին՝ շաբաթ և կիրակի օրերը, հոգեվոր մխիթարության և ուրախության օրեր եղան Մայր Աթոռում: Այդ օրերին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտներ բարեշնորհ Հովակիմ սրկ. Քիլեճյանը, Էլբեկ սրկ. Քսարամյանը, Արա սրկ. Հովհաննիսյանը, Մուրադ սրկ. Սողոմոնյանը և Անդրանիկ սրկ. Տերտերյանը ստացան քահանայական ձեռնադրություն և վեղար:

Ըստ Հայ Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, շաբաթ օրը երեկոյան, կիրակնամուտի ժամերգության ավարտին, տեղի ունեցավ նորընծաների քահանայական կոչման կարգը, ձեռամբ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և խարտավիլակությամբ հոգեշնորհ Տ. Միքայել աբղ. Աջապահյանի:

Քահանայական ձեռնադրության արարողության ընթացքում նորընծաները հանդիսավոր կերպով հանձն են առնում. «Ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօն Աստուծոյ և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնավոր գործոց...»:

Նորընծաների հոգևոր բարեմասնություններին և քահանայական ձեռնադրության արժանի լինելու մասին խարտավիլակ հայր սուրբի վկայությանը հաջորդում է ընտրյալների ուխտադրությունը՝ հետևելու և աշակերտելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սուրբ հայրապետներին:

Արարողության վերջում նորընծաները հրապարակավ արտասանում են Ս. Գրիգոր Տաթևացու կողմից սահմանված Հայաստանյայց Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Կիրակի օրը, առավոտյան, Մայր տաճարում սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Արժանի է...

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքից հետո սարկավագները, խարտավիլակի առաջնորդությամբ, Սեղանի ձախակողմյան աստիճաններով ծնրադիր բարձրանում են Ավագ խորան և, դառնալով դեպի ժողովուրդը, ձեռամբարձ հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «...ի սարկավագութենէ ի քահանայութիւն, սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Աշխարհիկ կյանքից հրաժարումից և «Աստուածային և երկնային շնորհ» շարականից հետո նորընծաները ծնրադիր մոտենում է բոլորվում են ձեռնադրող սրբազան հոր շուրջ, իսկ սրբազանն իր ձեռքը նրանց գլխներին դնելով արտասանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծաներին շնորհվում է փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության հետ միասին փակվում է վարագույրը, որի ընթացքում էլ զգեստավորվում են նորընծաները:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Օծման խորհրդավոր և հուզիչ պահն է: Ձեռնադրող սրբազան հայրը ս. մեռոնով օծում է նորընծաների ճակատն ու ձեռքերը և նրանց վերանվանում նոր անուններով. Հովակիմ սրկ. Քիլեճյանին՝ Տ. Մամիկոն, Էլբեկ սրկ. Քարամյանին՝ Տ. Առաքել. Արա սրկ. Հովհաննիսյանին՝ Տ. Մակար. Մուրադ սրկ. Սողոմոնյանին՝ Տ. Ավետիք և Անդրանիկ սրկ. Տերտերյանին՝ Տ. Սուքիաս:

Քահանայական օծում ստանալուց հետո նորընծաները դառնում են դեպի ժողովուրդը և տալիս իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ ձեռնադրության և օծման ևարարողության գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը խոսում է ոգեշունչ մի քարոզ, շնորհավորելով նորընծա քահանաներին և հույս հայտնելով, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր գործունեությամբ միշտ բարձր կպահեն հայ հոգևորականի սուրբ ու նվիրական կոչումը:

Նույն օրը երեկոյան, ժամերգությունից հետո, կատարվում է «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգը ըստ Ձեռնադրության Մաշտոցի, և հինգ նորընծա քահանաները ստանում են կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարը:

Արարողության հաջորդ առավոտյան նորընծա աբեղա հայրերին ընդունում է Վեհափառ Հայրապետը, նրանց բաշխելով իր սրբազան օրհնությունն ու հայրական բարեմաղթությունները, հույս հայտնելով, որ նրանք կնվիրվեն Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի սպասավորության:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա աբեղաներին՝ մաղթելով, որ ցուցաբերեն աննկուն եռանդ և հաստատակամություն՝ որպես «ծառա բարի» և «հուվիվ քաջ», սպասավորելու ս. Եկեղեցու առաքելության իրականացման: